ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

«15» նոյեմբերի 2011թ.
գ. Նորակերտ

թիվ 131

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ.

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ներկայացվում է Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 15-ին կայացած թիվ 8 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 10 էջ

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ [illegible] ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11095-11
25 11 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը նոյեմբերի 2011թ. կայացած
N 8 արտահերթ նիստի թիվ 1 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ

2011 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 15- ին ԿԱՅԱՑԱԾ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ թիվ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրա - պետության օրենքի 12-րդ հոդվածի 4- րդ կետով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Նորակերտ գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ավագանու անդամներ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Ասատրյան Ժորա		---------	----------
Վարդանյան Հովհաննես		----------	----------
Տաշչյան Պատվական		---------	----------
Հակոբյան Հարություն		---------	----------
Մկրտչյան Հարություն		---------	----------
Բալասանյան Սամվել		----------	----------
Վարդանյան Գեղամ		----------	----------
Ստեփանյան Զարեհ		----------	----------
Հովսեփյան Հրայր		----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2011 թվականի նոյեմբերի 15 գ. Նորակերտ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ
15-ի N 8 – Ն թիվ 1 ՈՐՈՇՄԱՆ.

ՕՐԱԿԱՐԳ

1. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ.
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
4. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

15- ը նոյեմբերի 2011թ. կայացած
ավագանու թիվ 8 արտահերթ
նիստի թիվ 2 որոշումը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ գյուղական համայնքի վարչական տարածքում 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Ասատրյան Ժորա		----------	----------
Վարդանյան Հովհաննես		----------	----------
Տաշչյան Պատվական		----------	----------
Հակոբյան Հարություն		----------	----------
Մկրտչյան Հարություն		----------	----------
Բալասանյան Սամվել		----------	----------
Վարդանյան Գեղամ		----------	----------
Ստեփանյան Զարեհ		----------	----------
Հովսեփյան Հրայր		----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2011 թվականի նոյեմբերի 15 գ. Նորակերտ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ի N 8.2 ԹԻՎ 2 ՈՐՈՇՄԱՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ .

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի,շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիմնական օբյեկկտների համար՝

   ա) մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բընակելի,այդ թվում այգեգործական (ամառանոցային)տների,ինչպես նաև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 6000 /վեց հազար/ դրամ

   բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

   բ ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

   բ բ)101-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար /դրամ.

   բ գ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝35000 /երեսուն հինգ հազար/ դրամ.

   ոչ հիմնական շինությունների տեղադրման համար.

   գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 /հազար/ դրամ.

   դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 /երկու հազար/ դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների, քաղաքացիական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

   ա) չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն 500 /հինգ հարյուր/ դրամ.

   բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման,վերականգնման կամ արդիակաաշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա)հետևանքով օբյեկտիընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործա-

ռական նշանակության փոփոխություն,ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով:

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում ստորգետնյա)շինություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը;

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել `

1) Ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հյմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 /երեք հազար / դրամ.
2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական ներսում շինությունների վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 /երեք հազար / դրամ.

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչիուր օրվա համար՝ 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ.

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ.

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 /հիսուն հազար/ դրամ.

7. Համայնքի տարածքում առևտրի,հանրային սննդի,զվարճանքի,շահումներով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բազնիքները (սաունաները), խաղատները ժամը 24-00 – ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա) առևտրի օբյեկտների համար՝35000 /երեսուն հինգ հազար/ դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000/հիսուն հազ/ դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝500000/հինգ հարյուր հազար/ դրամ.

ե) շահումներով խաղերի կազմակերպման համար՝250000/երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝100000/մեկ հարյուր հազար/ դրամ.

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝2500 /երկու հազար հինգ հարյուր / դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2000/երկու հազար/

դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 / մեկ հազար/ դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր / դրամ.

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ.
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ.
11. գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար՝1000 /մեկ հազար/ դրամ.
12. գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրա-եշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել1000 /մեկ հազար/ դրամ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

15-ը նոյեմբերի 2011թ. կայացած
ավագանու թիվ 8 արտահերթ նիստի
թիվ 3 որոշումը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19 –րդ կետով, «Իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 56–րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՈՐՈՇԵՑ

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ գյուղական համայնքի կողմից 2012 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Ասատրյան Ժորա		---------	----------
Վարդանյան Հովհաննես		---------	----------
Տաշչյան Պատվական		---------	----------
Հակոբյան Հարություն		---------	----------
Մկրտչյան Հարություն		---------	----------
Բալասանյան Սամվել		---------	----------
Վարդանյան Գեղամ		---------	----------
Ստեփանյան Զարեհ		---------	----------
Հովսեփյան Հրայր		---------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2011 թվականի նոյեմբերի 15 գ. Նորակերտ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N 8 –Ն թիվ 3 ՈՐՈՇՄԱՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ գյուղական համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող ինչպես նաև հաստատվող փոստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1) Համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ.

2)Համայնքի բնակիչ համարվող անձանց ըրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

3)Համայնքի բնակիչ համարվող անձանց աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

4)Համայնքի բնակիչ համարվող անձանց նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների բանկային ավանդներ և փոստային առաքումներ (այդ թվում դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիր հաստատելու համար՝1 000 /մեկ հազար/ դրամ.

5)Համայնքի բնակիչ համարվող անձանց բնութագիր և երաշխավորագիր տալու համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ.

2. «Նորակերտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող երեխաների համար ամսեկան վճար սահմանել՝ 4500 /չորս հազար հինգ հարյուր/ դրամ.

Միակողմանի ծնողազուրկ երեխաների համար սահմանել զեղչ 30%-ի չափով՝ ամսեկան վճարը սահմանել 3150 դրամ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

15 -ը նոյեմբերի 2011թ. կայացած ավագանու թիվ 8 արտահերթ նիստի թիվ 4 որոշումը.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1- ին մասի 5-րդ կետով,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՈՐՈՇԵՑ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ գյուղական համայնքի թվով սակավ ապահովված բնակիչների տալ սոցիալական օգնություն մեկ հարյուր քառասուն հինգ հազար դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ավագանու անդամներ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Ասատրյան Ժորա		----------	----------
Վարդանյան Հովհաննես		----------	----------
Տաշչյան Պատվական		----------	----------
Հակոբյան Հարություն		----------	----------
Մկրտչյան Հարություն		----------	----------
Բալասանյան Սամվել		----------	----------
Վարդանյան Գեղամ		----------	----------
Սռեփանյան Զարեհ		----------	----------
Հովսեփյան Հրայր		----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Շ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2011 թվականի Նոյեմբերի 15 գ. Նորակերտ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի
N 8 – Ն թիվ 4 ՈՐՈՇՄԱՆ.

ՑՈՒՑԱԿ

Նորակերտ գյուղական համայնքի սակավ ապահովված բնակիչներին դրամական օգնության տրամադրման.

h/h	Ազգանուն Անուն	Տրամադրված գումարը / դրամ /
1.	Մարուքյան Հասմիկ	20000
2.	Առաքելյան Լեռնիկ	42000
3.	Գասոյան Սոնիկ	47000
4.	Սայադյան Բաբիկ	36000
	Ընդամենը	145000